

Ս. Ս. Մարուքյան

Ե. ՉԱՐԵՆՑԻ ՊՈԵԶԻԱՅԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

Բազմադան է ու հարուստ Չարենցի բանաստեղծական բառապաշարը: Այն արտացոլում է 20-ական թվականներից հետո հայ գրական լեզվի մեջ կատարված տեղաշարժերն ու փոփոխությունները: Չարենցն օգտվել է հայ գրական լեզվի բառապաշարի տարբեր շերտերից, բայց ոչ միատեսակ ձևով:

Չարենցի չափածո ստեղծագործություններում գործածված բոլոր բառերի թիվը, ներառյալ և նորակերտ բառերը, հասնում է 7500-ի: Սա բավական պատկառելի թիվ է այնպիսի մի բանաստեղծի համար, որի ստեղծագործական կյանքը տևել է երկու տասնամյակից քիչ ավելի: Ի դեպ, Թումանյանի ամբողջ բառապաշարը հասնում է 10000-ի, իսկ Իսահակյանի միայն չափածոյի բառապաշարը՝ 5000-ի²:

Ըստ բառաշերտերի Չարենցի լեզվի բառային կազմը հետևյալ պատկերն է ներկայացնում.

1. Ընդհանուր հայերեն բառեր՝ 5150, գրաբարյան-արխաիկ և պատմական շերտի բառեր՝ 200, ժողովրդական-խոսակցական բառեր՝ 1000, բարբառային բառեր՝ 300, փոխառյալ բառեր՝ 220, նորակազմ բառեր՝ 400, օտարաբանություններ (варваризмы)՝ 200:

Ինչպես տեսնում ենք, բառային կազմի այս շերտերը միևնույն տեսակարար կշիռը չունեն Չարենցի պոեզիայում:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԵՐ

Չարենցի չափածո ստեղծագործությունների բառապաշարի հիմնական մասը (75 տոկոսից ավելին) ընդհանուր հայերեն բառերն են, որոնք այսօր էլ, առանց էական ձևափոխությունների, գործածվում են մեր լեզվի մեջ՝ մտնելով նրա բառապաշարի ամենակենսունակ մասի մեջ: Դրանք իրենց քանակով ավելի շատ են, քան մյուս բոլոր շերտերի բառերը միասին վերցված:

Բառակազմի հիմնական աղբյուրը ընդհանուր հայերեն բառերն են, ինչպիսիք, օրինակ՝ ազգ, ազատություն, ազդել, աթոռ, աղջիկ, աղքատ, աշխատել, ամպ, աշխարհ, առավոտ, աստղ, արև, բարձր, դալ, դարուն, դետ, գործ, գրություն, երգ, եղբայր, երկինք, ժողովուրդ, մարդ, ձեռք, մազ, մաքուր, տուն, ցող, քամի, օդ, ջուր, շնչել, լեռ, քար, քնքուշ, տեսնել և այլն: Բոլոր գրող-

¹ Բառաքանակի այս թիվը դեռ կարող է ավելանալ, բայց ոչ երբևէ պակասել, որովհետև մենք քարտադրել ենք Չարենցի միայն տպագրված գործերը (բացառությամբ «Աքիլլես թև» Պյերրոս պոեմի), իսկ արխիվում պահվող որոշ անտիպ գործեր, որ հավանաբար կտպագրվեն Չարենցի երկերի ակադեմիական հրատարակության ժամանակ, չենք քարտադրել:

² Վ. Առաքելյան, Ավ. Իսահակյանի պոեզիայի բառապաշարի ռեաբանական առանձնահատկությունները, Երևան, 1956, էջ 53 և «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 1:

ներն էլ օգտվում են այս ընդհանուր բառաշերտից, որպես լեզվի շինանյութից, բայց նրանցից յուրաքանչյուրն այդ բառերից օգտվում է յուրովի՝ ինչ-որ անհատական մոմենտ մտցնելով այդ ամենագործածական բառերի կիրառությունների մեջ: Չարենցը հմուտ կերպով օգտվել է ընդհանուր բառաշերտի բառերից՝ հաղորդելով նրանց արտահայտչական նոր երանգներ:

Քանի որ հիմնական բառաշերտի բառերն օժտված չեն ոճական հատուկ երանգներով, ուստի լեզվաբանական և ոճաբանական գրականության մեջ այդ բառաշերտը համարվում է չեզոք (нейтральная лексика): Բառապաշարի ուսումնասիրության ժամանակ սովորաբար բառերի այդ շերտն անուշադրության է մատնվում, որովհետև ոճական յուրահատուկ երանգների բացակայությունը դժվարացնում է այդ կարգի բառերի դասակարգումը: Իվոզդյովը հարմար չի գտնում բառակազմի այդ շերտը «չեզոք» տերմինով անվանել և առաջարկում է դրանք կոչել ընդհանուր գործածական բառեր (общеупотребительные слова)³: Հիմնական բառաշերտի բառերն աչքի են ընկնում իրենց կիրառական բազմազանություններով: Գրողը, օգտվելով այդ բառերից, հաճախ հարստացնում և զարգացնում է այդ բառերի իմաստային կողմը, հաղորդում դրանց ոճական նոր, մինչ այդ անհայտ երանգներ: Ամենասովորական և գործածական բառերը գրողը կարող է օգտագործել բոլորովին նոր բառային միջավայրում, հայտնաբերել նրանց գործածության բոլորովին նոր եղանակներ:

Բանաստեղծական խոսքում ամեն բառ, նույնիսկ ամենահասարակ թվացող, կարող է այլ բառերի հետ ունեցած կապակցություններում յուրահատուկ իմաստային երանգ ստանալ և որոշակի ոճական ֆունկցիա կատարել, որովհետև նոր բառակապակցություններում ծնվում են բոլորովին նոր երանգներ: Ընդհանուր բառերը ոճական տեսակետից բնութագրելիս պետք է նկատի ունենալ ոճա-արտահայտչական այն բազմաթիվ երանգները, որոնք պայմանավորված են նրանց յուրահատուկ կիրառություններով: Բառի անսովոր գործածությունը կարող է փոխել խոսքի ամբողջ բնույթը, հաղորդել նրան իմաստային և ոճական նոր երանգ: Այսպես, օրինակ, լավիել բառը, որ նշանակում է ազահաբար խժռել, ուտել, և ունի բացասական երանգ, Չարենցը համարձակորեն օգտագործել է բառական նոր միջավայրում ու բոլորովին տարբեր իմաստով.

Հավաքել է ուղեղը Իլյիշը,

Լավում է լուրերը ու ծամում... (Ընտիր երկեր, 1955 թ., էջ 97):

«Լավել» և «ծամել» բառերի այս անսովոր կիրառությունը բոլորովին նոր է, և դա պայմանավորված է ոչ միայն նրանց յուրահատուկ գործածությամբ, այլև պատմական իրադարձությունների կոնկրետ բնույթով: Քաղաքացիական կռիվների ժանր օրերն են. օտարերկրյա ինտերվենտները ուզում են խեղդել սովետների երիտասարդ ռեսպուբլիկան: Այդ վիթխարի իրադարձություններին ընթացք տվող ղեկավարը, որը զսպանակի նման լարել է իր ուղեղը, չէր կարող այլ կերպ ընկալել ռադմաճակատից իրեն հասնող լուրերը: Եվ ահա բանաստեղծը այդ վիթխարի իրադարձությունների ահազանությունը, թափը, ինչպես նաև մեծ առաջնորդի անհանգստությունն ու ամեն

³ А. Н. Гвоздѣв, Очерки по стилистике русского языка, Москва, 1955, стр. 70.

ինչ մի ակնթարթում ընկալելու, վերլուծելու և ծագած հարցերին հույժ արագ ուլատասխան գտնելու մոմենտը ցայտուն ձևով ներկայացնելու համար գործածել է շատ սովորական բառեր լավիև ու ծամել:

Չարենցը հմուտ կերպով օգտվում է ընդհանուր բառերի իմաստային բազմազանություններից՝ իր բանաստեղծական լեզուն հարստացնելով նույն բառերի տարբեր իմաստների նուրբ կիրառություններով: Այստեղ նկատի չունենք այն իմաստները, որ ձեռք են բերում նրանք տեքստում, յուրահատուկ կիրառության շնորհիվ, այլ այն իմաստները, որ բառարաններում արձանագրված են և այս կամ այն չափով ամրացված են տվյալ բառի իմաստային նշանակության մեջ, նման դեպքում բառի՝ տարբեր իմաստներով գործածությունը դիտվում է ոչ որպես հեղինակային գործածության արդյունք, այլ բառի բազմիմաստությունը դրսևորող մոմենտ: Այսպես, օրինակ, երկիր բառը մեր լեզվում ունի բազմաթիվ նշանակություններ. այդ բառի 11 նշանակություն արձանագրված է Մախասյանցի բառարանում:

Չարենցն այդ բառը նույնպես գործածել է տարբեր իմաստներով՝ հայրենիք, երկրագունդ, հող, գետին, պետություն, աշխարհ և այլն (նույն տեղում, էջ 13, 105, 76, 109):

Օգտվելով ընդհանուր բառերի բազմիմաստություններից, Չարենցը հաճախ որոնել է բառերի հին իմաստները, վերականգնել դրանց մոռացված նշանակությունները: Այսպես, օրինակ, աղբհսել բառը, որ այժմ գործածված է իբրև խնդրել բառի հոմանիշ, նրանից տարբերվում է իմաստային նուրբ երանգով՝ սաստիկ աղաչել, գութը շարժելով խնդրել: Բայց այդ ընդհանուր իմաստի հետ բառն ունեցել է նաև ինքն իրեն արդարացնել, ջատագովել իմաստը: Հենց այս վերջին իմաստով է գործածել Չարենցը այդ բառը «Սասունցի Դավիթ» պոեմի հետևյալ հատվածում.

Գնաց մեր Օհանն, ահով, գողով
Արքայի առջև այն անողոր
Գլուխ խոնարհեց ազգով-ցեղով,
«Քոնն է» — աղբհսեց «երկիր ու հող» —
Ընծայեց նրան ոսկի շողշող («Գիրք ճանապարհի», էջ 17):

Հանգչել բառը բացի շիջանել, մարել իմաստներից, գործածել է նաև հանգստանալ իմաստով:

Այլանդակ գուղձեր, դեի ապարանք.
Մնացինք գիշերն հանգչելու համար (Ընտիր երկեր, էջ 6):

Իսկ մի այլ տեղում նույն բառը գործածված է այլ՝ մեռնել իմաստով.

Աչքերը թարթեց նա վերջին անգամ
Եվ գոհ ժպտալով ժպտադեմ հանգալ (նույն տեղում, էջ 7):

Սակայն պիտի ասել, որ հանգչել բառի վերը բերված իմաստներով գործածությունը ժամանակակից հայերենի համար բնորոշ չէ, որովհետև բերված իմաստներով այն համարյա չի գործածվում: Ծիշտ է, այդ իմաստները կազ-

մել են բառի սկզբնական նշանակությունները, բայց լեզվի զարգացման ընթացքում ետին պլանի վրա են մղվել նրա սկզբնական նշանակությունները, իսկ փոխաբերական գործածությունների հիման վրա ձեռք բերված երկրորդական իմաստները դարձել են հիմնական:

Հոլովել բառը իր հին իմաստով նշանակում է՝ թավալել, գլորել, փոփոխել, պտտեցնել: Բառի այդ հին իմաստը վերականգնել է բանաստեղծը և ձշտորեն գործածել:

Շուրջդ օրերը վառվում ու հուլովվում են արագ (Ընտիր երկեր, էջ 134):

Ջարենցի բառապաշարի իմաստային իրողությունները քննելիս նկատվում է, որ նա ոչ միայն օգտվել է հայոց լեզվի ընդհանուր բառաշերտի մեջ մտնող բառերի բաղմազան նշանակություններից, այլև ինքն էլ իր հերթին հաճախ նպաստել է բառիմաստի զարգացմանն ու հարստացմանը՝ բառերին տալով նոր նշանակություններ, ընդլայնելով նրանց իմաստային կողմը: Օրինակ՝ անբան բառը, որ Մալխասյանցի բառարանում բերված է 9 նշանակությամբ, Ջարենցի ստեղծագործություններում գործածված է բոլորովին նոր՝ անմշակ, չմշակված իմաստով:

Եվ իջավ մռայլ ևրադը չարի

Այն խայտաճամուկ դաշտերում անբան (նույն տեղում, էջ 11):

Հանգչել բառը, բացի վերը բերված իմաստներից, գործածված է նոր՝ լռել իմաստով:

Եվ կցրտանա քնարդ հանգած՝

Մեննեկուց առաջ մի վերջին անգամ

Ողջույն հնչելով ապագա կյանքին... (նույն տեղում, էջ 175):

Անսովոր է դարձնել բառի գործածությունը ղեկավարել իմաստով:

Հարկավոր է ամեն աղախին

Սովորի պետություն դարձնել... (նույն տեղում, էջ 97):

Աննյութընկալ բառը մեր լեզվում նշանակում է անհյուրասեր, հյուր չընդունող: Մալխասյանցի բացատրական բառարանում բերված է դրա մի այլ նշանակություն ևս՝ ապրելու հնարավորություններ չտվող: Ջարենցն այն գործածել է բոլորովին նոր իմաստով՝ անշուք, անհրապույր:

Մթում կորած խրճիթների աննյութընկալ պատերը սև

(նույն տեղում, էջ 157):

Ջարենցի բանաստեղծական լեզվին առանձնահատուկ հարստություն և գունագեղություն է տալիս նույնանիշների և հոմանիշների առատ օգտագործումը: Նույն բառերի կրկնությունից խուսափելու համար Ջարենցը հաճախ գործածում է հոմանիշներ ու նույնանիշներ: Այսպես, ևթե մի տեղ օգտագործում է ուլի, ապա մի այլ տեղում՝ նամփա, կամ նանապառհ բառերը: Նույն-

նանիշների կիրառության մեջ նկատելի է որոշ օրինաչափություն, որ պայմանավորված է այդ բառերի կիրառական տարբերություններով: Դրանք, ճիշտ է, բառեր են նույն առարկայական նշանակությամբ, բայց ունեն կիրառական նուրբ տարբերություններ, որովհետև լեզվի մեջ բացարձակ նույնիմաստ բառեր չկան:

Օրինակ՝ նամփա և նանալարհ բառերն օգտագործված են կոնկրետ, առարկայական նշանակությամբ.

Կանչում էր, կանչում նամփան անմեկին
Ոլորապտույտ մեր առաջ փռված (Ընտիր երկեր, էջ 5):
Ընկավ իրպոն Երևանի նանալարհին (նույն տեղում, էջ 112):

Իսկ ուղի բառն օգտագործված է ընդհանուր, վերացական նշանակությամբ.

Եվ էլի ուղին իմ դժվար է,
Նման է ուղուն քո վերջին (նույն տեղում, էջ 253):

կամ՝

Տարել է ուղին քո խորդուրորդ
Քեզ դեպի անհաս բարձրություններ. (նույն տեղում, էջ 176):

Այս նույնանիշները Չարենցը գործածում է ոչ միատեսակ շափով: Այսպես, ճամփա բառն օգտագործված է 56 անգամ, ճանապարհը՝ 27, ուղին՝ 96: Նույնանիշներից օգտվելիս բանաստեղծը նախապատվությունը տալիս է մերթմեկին, մերթ մյուսին: Օրինակ՝ արև, արեգակ, արեգ, արփի նույնանիշներից ամենից շատ գործածվում է արև (228 անգամ), արեգակը՝ 31 անգամ, արեգը՝ 2 անգամ, իսկ արփի միայն մեկ անգամ (Ընտիր երկեր, էջ 235):

Չարենցն օգտվում է ոչ միայն գրական լեզվի մեջ եղած և ոճական տարբեր երանգներ ունեցող նույնանիշներից (նվիրել-ընծայել, այր-քարայր-քարանձավ, աղբատ-ընչազուրկ), այլև գրական լեզվի մեջ եղած նույնանիշներին համարժեք բարբառային կամ ժողովրդական բառերից: Օրինակ՝ այտ-թուշ, հարևան-դրկից-դրացի, թշնամի-դուշման, պարանոց-վիզ, խնջույք-քեֆ-կերուխում, գեր-չաղ և այլն:

Չարենցն առատորեն օգտագործել է նաև հայոց լեզվի մեջ եղած հոմանիշները՝ օգտվելով նրանց իմաստային ամենափոքր նրբություններից: Այսպես, օրինակ, մալուր ընդհանուր իմաստի համար նա օգտագործել է անաղարտ, անապակ, անեղծ, անբիծ, անարատ, կույս, կուսական, զուլալ, վճիտ, ջինջ, պարզ, սուրբ հոմանիշները, ծեռ իմաստի համար՝ ալեղարդ, ալեռը, ալեհեր, զառամ, զառամյալ: Օգտվելով հոմանիշների իմաստային նրբություններից՝ Չարենցը դրանք օգտագործում է ոչ միայն նրանց մոտավոր իմաստներն արտահայտելու համար, այլև միասին, զուգահեռ գործածություններ ուժեղացնում է նրանց իմաստային կողմը:

Օրինակ՝

Եվ անարատ մի սիրտ կար: Եվ մի ուղեղ
Դեռ անապակ, դեռ ջինջ, դեռ մալուր (Ընտիր երկեր, էջ 202):

Այստեղ անապակ, ջինջ, մաքուր հոմանիշներն ընդգծված ձևով արտահայտում են ուղեղ գոյականի մաքուր լինելու հատկանիշը:

Ընդհանրապես պետք է ասել, որ ոճական տարբեր երանգներ ունեցող հոմանիշների զուգահեռ գործածությունը Չարենցի ոճի բնորոշ կողմերից մեկն է: Նա հաճախ է իրար կողքի գործածում գրական, ժողովրդական-խոսակցական երանգ ունեցող ոճական հոմանիշներ:

Օրինակ՝

Աշուղ Սայաթ-Նովի նման՝ ես երգ ու տաղ պիտի ասեմ,

Երգեմ պիտի գիշեր-ցերեկ ու սրտի խաղ պիտի ասեմ

(Ընտիր երկեր, էջ 159):

Երբեմն հոմանիշների միջև եղած իմաստային նրբերանգներն այնքան աննշան են, որ դժվար է լինում դրանք իրարից զանազանել. այդ պատճառով բանաստեղծը դժվարանում է նախապատվություն տալ այս կամ այն հոմանիշին և իր միտքն ամբողջական ու լրիվ արտահայտելու համար օգտագործում է մի քանի հոմանիշներ իրար մետ, որոնք իմաստային տեսակետից լրացնում են իրար:

Այսպես, օրինակ՝

...Եվ ահա ծեր

Մաղերին նրա, գլխին հուրհեր

Իջավ մառախուղ, ցրտին ձմեռ

Դարձավ նա զառամ ու ալեհեր («Գիրք ճանապարհի», էջ 12):

ԳՐԱԲԱՐՅԱՆ ԲԱՌԵՐ ԵՎ ԱՐԽԱԻԶՄՆԵՐ

Չարենցի բառապաշարում եղած գրաբարյան բառերն ու արխաիզմները այնքան էլ շատ չեն, ընդամենը 180 բառ⁴ և ընդհանուր բառապաշարի մեջ շատ շնչին տոկոս են կազմում:

Չարենցի ստեղծագործություններում, ինչպես և քսանական թվականների հայ պոեզիայում առհասարակ գրաբարյան բառապաշարը շատ քիչ տեղ է գրավում: Դա, թերևս մասամբ, պայմանավորված էր այդ շրջանում տարածում գտած անցյալի կուլտուրական ժառանգությունը ժխտելու սխալ տենդենցներով:

Մեր լեզվական ժառանգությունը ժխտելու, «նոր» լեզու ստեղծելու այդ սխալ միտումներն իրենց բացասական ազդեցությունն էին թողնում նաև գրաբարյան բառապաշարի օգտագործման վրա: Սակայն 30-ական թվականներին, երբ մասամբ հաղթահարվում են այդ սխալ հայացքները և քննության առարկա են դառնում գրողի վարպետության, գրական լեզվի զարգացման և հարստացման հարցերը, գրողները ձգտում են գտնել բանաստեղծական լեզուն ժողովրդին մոտեցնելու, իրականությունը հարուստ լեզվով արտացոլելու ճիշտ ուղիներ: Երեսնական թվականներին առաջ են քաշվում գրաբարյան բառամթերքը օգտագործելու, հայ գրական լեզուն հարստացնելու և զարգաց-

⁴ Այստեղ, իհարկե, նկատի չունենք այն բառերը, որ ընդհանուր են գրաբարի և ժամանակակից հայերենի համար:

նելու հարցերը: «Մեր անցյալի լեզվական հարստության մասին խոսելիս մենք չենք կարող անտեսել այնպիսի մի հազարամյա շտեմարան, որպիսին է գրաբարը»:

Չարենցի բառապաշարի քննությունը ցույց է տալիս, որ զրաբարյան բառապաշարը նրա ստեղծագործություններում լայն գործածություն է ստանում 30-ական թվականներին (հատկապես «էպիքական լուսարաց» և «Գիրք ճանապարհի» բանաստեղծությունների ժողովածուներում):

Չարենցի բառապաշարում հանդիպում ենք այնպիսի բառերի գործածության, որոնք ձևով արդեն հիշեցնում են իրենց զրաբարյան լինելը: Դրանք, այսպես ասած, զրաբարյան փոխառություններ են: Օրինակ՝ այրուձի, անավասիկ, անգայր, բազմաստեղ, կամիմ, լյառ, համբառնալ, անհեղի, բարձրյալ, գառնուրյալ, տաժան, վառան, վաղվաղակի, ուրա, զգենուլ, կոռնչել և այլն:

Գրաբարյան բառերի օգտագործումը զրոգից պահանջում է հմտություն, լեզվական ճաշակ: Գրաբարյան բառերից օգտվելիս Չարենցը հանդես է բերում լեզվական նորությունների իմացություն: Նա կարողանում է հին, մոռացված բառերը դնել նոր կապակցությունների մեջ, բառական նոր միջավայրում, որի շնորհիվ այդ բառերը ստանում են յուրահատուկ ոճական արժեք: Հետաքրքրական է նկատել, որ Չարենցը վերցնում է զրաբարյան բառը և խոնարհում աշխարհագրորդի քերականական օրենքներով: Օրինակ՝

Աշխարհում շաշող հողմերից այն կղզում ապաստան գտած,
Չգեցած սեասե սքեմ՝ ևս տալիդր սակայն սիրեցի.

(«Գիրք ճանապարհի», էջ 72):

Այստեղ աշխարհագրորդի ձևով գործածված զգեցած, ինչպես և սքեմ գրաբարյան բառերի օգտագործումը որոշակի երանդ է հաղորդել բանաստեղծությանը, և նրանց կիրառությունն էլ պայմանավորված է ոճական կոնկրետ նկատառումներով: Նրբաման օգտագործված զրաբարյան բառն այնպես է ձուլվում տվյալ բառական միջավայրին, որ ընդհանուր կապակցության մեջ չի էլ զգացվում նրա զրաբարյան լինելը: Օրինակ՝

Աղբերի մեջ՝ կարմիր մի հուր, ու սրտերում—կարմիր կրակ՝
Վերջին թափով մի ամրակուռ՝ անգայր կռվում էին նրանք

(Ընտիր երկեր, էջ 20):

Այդպիսի բառերի մեջ հատուկ ուշադրության են արժանի զրաբարյան արխաիզմները: Հնացած բառերի մեջ կան այնպիսիները, որոնք չեն օգտագործվում ժամանակակից գրական լեզվում և այդ պատճառով էլ անհասկանալի են, կան և այնպիսիները, որոնք թեպետ հասկանալի են ժամանակակից այդ գրական լեզվով խոսողների համար, բայց գտնվում են նրանց պասսիվ բառապաշարում և օգտագործվում են շատ հազվադեպ: Չարենցի պոեզիայի բառապաշարում հղած արխաիզմները հիմնականում վերջին տեսակի են, և ինչ են դրանց մեջ անգործածական կամ անհասկանալի բառերը: Դրանց ան-

5 «Գրական թերթ», 1934, № 10:

գործածական լինելու պատճառներից մեկն այն է, որ նույն իմաստով մի ուրիշ հոմանիշ դուրս է մզել նրան գործածությունից և դարձրել արխաիկ-Օրինակ՝

Եվ մեր անմահության ակունքները այն ջինջ
 Պղտորել են ոխով ու ոչնչությամբ,
 Ջնշին տենչանքների անխոհությամբ ոսին,
 Փաթաթելով վզին մեր մի ճորտային շղթա,
 Սերմանելով մեր ողջ ժողովրդի մասին
 Ոչնչության սերմեր, անխոհության,
 Թշվառ անհողության և աղապատանքի

(«Գիրք ճանապարհի», էջ 45)։

Ընդգծված բառերն այժմ անգործածական են, որովհետև դրանց փոխարեն գործածվում են այդ բառերի այլ հոմանիշներ՝ փուշ, սին, դատարկ, գուք, սեռ, համակրություն։ Սրանց մի մասը պատմական շերտի բառեր են, պատմական երևույթների, եկեղեցական առարկաների անվանումներ։ Օրինակ՝ ուրար, հոգաբարձու, հորտ, հգնսվոր, շարական, սաղավարտ, մենաստան, նախարար, նավագ, նետ, նիզակ, նշար, սկիհ, վեդար, տեգ և այլն։

Ջարենցի բառապաշարում հանդիպում ենք ոչ միայն բառային, այլև իմաստային արխաիզմների։ Սրանք բառային արխաիզմներից տարբերվում են նրանով, որ եթե դրանք լեզվում չեն գործածվում, ապա վերջիններս որպես բառային միավորներ, գործածվում են, բայց դրանց մի քանի նշանակությունները կամ հին են, կամ արդեն հնացած։ Օրինակ՝ վաստակավոր բառը հնում, ի թիվս այլ իմաստների, ունեցել է նաև հոգնած, խոնջացած իմաստը, բայց հիմա այդ իմաստով գործածությունն անսովոր է, և այդ բառն այժմ գործածվում է այլ՝ վաստակ, արդյունք ունեցող իմաստով։ Ջարենցի մոտ հանդիպում ենք այդ բառի հին իմաստով գործածության։

Հնձվորները վաստակավոր կզան տուն (Կապուտաշյա հայրենիք, էջ 17)։

Հին իմաստով (աշխատել, չարչարվել, տառապել) է գործածված նաև վաստակել բառը հետևյալ օրինակում.

Դու շարժել ես արդյոք բազուկներդ,
 Վաստակել ես արդյոք ու հոգնել (Ընտիր Լրկեր, էջ 172)։

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌՆԵՐ

Բարբառային համարված բառերի քանակը Ջարենցի պոեզիայի բառային կազմում հասնում է մոտ 300-ի։ Բարբառային բառերի օգտագործումը Ջարենցի ստեղծագործություններում պայմանավորված է խոսքը ոճավորելու և զեղարվեստական-արտահայտչական այլ նկատառումներով։ Այս շերտի բառերի մեջ աչքի են ընկնում բարբառային-փոխառյալ բառերը։ Սրանք այն բառերն են, որոնք հայոց լեզվի մեջ են մտել պարսկական, արաբական, տաճկական լեզուներից և հին ժամանակներից գործածվելով՝ կամ ձուլվել են հայ գրական լեզվի ընդհանուր բառաշրջանին և կամ մնացել ժողովրդական-խո-

սակցական բառապաշարի մեջ: Բարբառային փոխառյալ բառերը, որոնք չեն դրականացել և մնացել են բարբառների մեջ, Չարենցի պոեզիայի լեզվի բառապաշարում շատ քիչ տեղ են գրավում: Այդ բառերից են՝ աբրեշում, արախ-չին, աշիբեր, բաղ, բայաքի, բեգաբել, բուտան, դավթար, դինջ, դուզ, գարար, գոօրա, քազի, խարջ, խաս, խալիչա, քամաշա, հեսար, դալմադալ, մեյդան, յախա, մուշտարի, յարա և այլն:

Բարբառային բառերին Չարենցը գիմում է երբեմն այն դեպքում, երբ դրանց հումանիշները հայոց լեզվի մեջ չի գտնում: Օրինակ՝ բայաքի, գարար, գոօրա, էշխ, ֆուսի, փարախ և այլն: Հաճախ էլ բարբառային բառերը հանդես են գալիս իրեն գրական բառերի հումանիշներ: Օրինակ՝ համբուրել-պաշել, ձյուն-ձուն, եղբայր-ախպեր, այտ-թուշ, հոգնած-գաղթած և այլն: Բերենք Չարենցի բառապաշարում եղած բարբառային բառերից մի քանիսը. աշել, արարա, բիբուն, բոզ (գույն), բոբել, բոռալ, դուշման, էգուց, էդ, էթալ, քազա, լն, քվանֆ, քեն, լեն, խշտիկ, ջան (մարմին), ջեբ, վոագ, ունֆ, ֆով և այլն:

Չարենցի պոեզիայում կան շատ բառեր, որոնք թեպետ Մալխասյանցի բացատրական բառարանում համարված են բարբառային, բայց ամենևին էլ այդպիսին չեն: Օրինակ՝ ահալի, անտունի, արևել, դողահար, կերուխում, քեծ, քովոուն, քուջ, լացակումաւծ, լուսաստղ, խոբունկ, խոպոտ, ծաղկուն, կոբնել, հիացֆ, մքնշաղ, ֆնատ և այլն: Այս կարգի բազմաթիվ բառեր, գրականության մեջ գործածվելով, զրկվել են իրենց բարբառային կեղևից, ստացել համընդհանուր գործածություն և մտել նախ՝ ժողովրդական խոսակցական բառերի, և ապա գրական լեզվի բառապաշարի մեջ: Այս գործում, անշուշտ, անչափ մեծ է գրողների դերը, որոնք բարբառային բառերն օգտագործելով իրենց ստեղծագործություններում, հղկում, մշակում են դրանք և բարձրացնում գրական լեզվի աստիճանին:

Բարբառային բառերից Չարենցն օգտվում է ոչ այն ձևով ու այն չափով, ինչ նրա նախորդները՝ Թումանյանը, Իսահակյանը: Այս հարցում Չարենցը հետևում է ոչ թե Թումանյանին կամ Իսահակյանին, այլ իր անմիջական նախորդին՝ Տերյանին, որի ստեղծագործությունների բյուրեղյա լեզուն նրա համար դառնում է ուսանելի օրինակ:

Չարենցի ստեղծագործությունների համար բարբառային բառերի օգտագործումը բնորոշ չէ: Նույնիսկ իր ստեղծագործության տարբեր շրջաններում Չարենցը տարբեր ձևով է րմբոնել բարբառից օգտվելու հարցը: Բարբառային բառերի անհարկի օգտագործման մենք հանդիպում ենք հատկապես 20-ական թվականների ստեղծագործություններում, երբ պոեզիայի մեջ իրենց զգացնել էին տալիս տեխնիցիզմը, նատուրալիզմն ու գոեհկաբանությունը, որոնք արտահայտվում էին նաև բարբառային բառերի օգտագործման մեջ:

Այդ տենդենցը իր արտահայտությունն է գտել Չարենցի 20-ական թվականների գործերում («Ռումանս-անսեր», «Պոեզոգուոնա», «Կապկազ թամաշա»), որոնց լեզուն տեղ-տեղ հասնում է նույնիսկ գոեհկության: Դա, իհարկե, պայմանավորված էր ժամանակաշրջանով, երբ գրողները հին հակադրովելու համար աշխատում էին փողոցի լեզուն, գոեհիկ արտահայտություններն ու բառերը խցկել գրականության մեջ:

Այդ շրջանում Չարենցը, հետևելով Թումանյանի լեզվական տրադիցիաներին, առատորեն օգտագործում է բարբառային բառեր ու արտահայտություններ՝ հաճախ նույնիսկ ծայրահեղության հասցնելով Թումանյանի լեզվական

առողջ տենդենցները: 1920—25 թթ. դրած մի շարք ստեղծագործությունների վրա («Ամենապոևմ», «Մաճկալ Սաքոյի պատմությունը», «Երգ ժողովրդի մասին», «Հենին քեռին», «Հենինն ու Ալին», «Կոմունարների պատերազմը»)⁶ որոշակիորեն պայմանավորված է Թումանյանի լեզվի ազդեցությամբ, և դրանք, մասնավորապես «Մաճկալ Սաքոյի պատմությունը» և «Երգ ժողովրդի մասին» ստեղծագործությունները, Թումանյանի լեզվական գեղարվեստական տրագիցիաներն օգտագործելու բնորոշ օրինակներ են: Այս գործում Չարենցը չի խուսափում նույնիսկ բարբառային այսպիսի բառեր օգտագործելուց՝ հմար, հմի, էկավ, էքալ, յախա, բենեց, խշտիկ, բիրուն, շլին, լման, խոխա, հալիվո, անոթի, խնչել, ոեխ, խի, բյասիր և այլն: Բարբառային այս բառերի գործածությունն ընդհանրապես Չարենցի ստեղծագործությունների լեզվի համար բնորոշ չէ: Հետագայում նա հրաժարվում է գրական լեզուն հասարակացնելու, բարբառային ավելորդ բառերով խճողելու այդ տենդենցից՝ ճիշտ կողմնորոշվելով գրական լեզվի և բարբառների փոխհարաբերության հարցում: Ինչ վերջին շրջանի ստեղծագործություններում Չարենցն իսպառ հրաժարվում է բարբառային տարրերի օգտագործումից, որովհետև նրա կարծիքով «զավառական բարբառը» «բացի լեզուն զուհկացնելուց ոչ մի նախապատվություն չի ստեղծում մեր գրական լեզվի զարգացման համար: Գավառական բարբառի խճողումը մեր գրականության մեջ լեզուն իր ընդհանուր գործոններով տանում է դեպի ետ»⁶: Խոսելով Թումանյանի լեզվում եղած բարբառային տարրերի և քերականական ձևերի մասին, Չարենցը նկատում է, որ բարբառային այդ ձևերը «չեն կարող մեր գրական լեզվի զարգացման համար օրինաչափություն լինել և կմոռնեն մեր բարձր գրական լեզվի մեջ: Չի մնա ոչ ճամփեն, ոչ էլ էս-ր, և մեր լեզուն կոփելու տեսակետից այդ առանձնահատկությունը չի հաղթանակի»⁷:

Բարբառային տարրերի օգտագործման հարցում ունենալով նման տեսակետ, Չարենցը հետզհետե ավելի է մաքրում իր ստեղծագործությունների լեզուն, բյուրեղացնում, գնալով իր մեծ նախորդի՝ Տերյանի ուղիով:

Բարբառային բառաշերտին են մոտենում ժողովրդական-խոսակցական բառերը, որոնք իրենց կատարած ֆունկցիաներով և ոճական արժեքով շատ ընդհանրություններ ունեն բարբառային բառերի հետ, և հաճախ դժվար է դրանց միջև խիստ որոշակի սահմաններ դնելը, մանավանդ որ հայերենի եղած բացատրական բառարաններում այդպիսի տարբերանշումներ չկան, իսկ Մալխասյանցի բացատրական բառարանում եղած նշումներն էլ միշտ չէ, որ արտացոլում են տվյալ բառի՝ հայոց լեզվի այս կամ այն բառաշերտին պատկանելի:

Ժողովրդական խոսակցական բառերի մեջ եղած լրացուցիչ կրանդների առկայությունը այդ բառերը դարձնում է ավելի արտահայտիչ, հուզական: Այդպիսի բառեր շատ կան Չարենցի բառապաշարում (գարուն, աշուն, օսնել, սիրուն, աշխարհ, մաւմանդ, ախալե, աբուն, իրիկուն, խաղացկուն, մուրազ, յար, լծկան և այլն): Նման բառերի օգտագործումը Չարենցի ստեղծագործությունների լեզվին տալիս է ժողովրդական հարազատություն:

⁶ «Մեր գրական լեզվի զարգացման տենդենցները և Դ. Դեմիրճյանի լեզվի մասին» ղեկուղման սղագրությունը: Գրականության և արվեստի թանգարան, «Սովետահայ գրողների միության» ֆոնդ, գործ 2, էջ 59 (18):

⁷ Նույն տեղում, էջ 52 (11):

Չարենցի ստեղծագործությունների բառային կազմում ուրույն տեղ են զբաղում հարադրություններն ու զարձակածրային արտահայտությունները: Ժողովրդական խոսքի սեղմությունն ու դիպուկությունն իրենց մեջ պարունակող հարադրությունները գեղարվեստական խոսքը զարձնում են արտահայտիչ ու պատկերավոր: Չարենցի բառապաշարում եղած հարադրությունները բավական շատ են, իսկ դրանց մեջ առավել շատ են բայական հարադրությունները: Որինակ՝ աչք ածել, ականջ անել, բոյ բաշել, գլուխը եղել, գլուխ տալ, միտք անել, սիրտ տալ, սիրտ առնել, հարց տալ, բուն մտնել, մտքից հանել, աչքով անել, ջրով անել, այցի դալ, բամուն տալ, գործի կպչել, գլխի բնկնել և այլն:

ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐ

Չարենցի բառապաշարում հանդիպում ենք բազմաթիվ նոր փոխառությունների, որոնք մեր լեզվի բառային կազմի մեջ մտան հատկապես Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո: Փոխառյալ բառերի թիվը Չարենցի պոեզիայի բառապաշարում հասնում է 220-ի:

Չարենցը միանգամայն ճիշտ մոտեցում է ունեցել փոխառություններից օգտվելու հարցում՝ դրանք զիտելով որպես մեր լեզվի բառային կազմի հարստացման կարևոր աղբյուրներից մեկը: Անհնարին էր օրեցօր զարգացող կյանքն արտացոլել՝ առանց օգտագործելու նոր կյանքի բազմաթիվ երևույթներն բնագրկող լեզվական փոխառությունները: Չարենցն իր ստեղծագործություններում, հատկապես «Կոմալմանախում» և 20—30-ական թվականներին գրած գործերում, առատորեն օգտագործել է փոխառությունները, մի հանգամանք, որ պայմանավորված էր նոր կյանքի, հասարակական նոր հարաբերությունների զարգացումով: Այդ փոխառություններն արտացոլում են մեր նոր կյանքի բազմաթիվ բնագավառները. բյուրո, բոլշևիկ, բուրժուա, անտանտա, պեկարիստ, դիկտատուրա, ինտերնացիոնալ, կապիտալ, կապիտալիզմ, կոմսոմոլ, կոմունար, կոմունիստական, կոմունիզմ, պրոլետարիատ, սոցիալիստ. մենշևիկ և այլն: Այս բառերն հիմնովին մտել են հայոց լեզվի բառային կազմի մեջ, ձուլվել համընդհանուր գործածություն ունեցող բառերին՝ դառնալով հասարակական նոր երևույթների անվանումներ:

Փոխառյալ բառերի մյուս խումբն արտացոլում է կուլտուրային, կենցաղին և այլ բնագավառներին վերաբերող երևույթներ, ինչպես, օրինակ՝ ամպլուա, անտրակտ, անսիոմա, ավտոմոբիլ, աֆիշ, դոլլար, լիֆտ, ոռոյալ, սալոն, վետերան, ֆոկստրոտ, վուալ, տանգո, սիտինգ, մոնումենտ, կաֆե, ռեստորան, ռեանշ, կադրիլ և այլն: Այս փոխառությունները մեր լեզվի մեջ մտել են կամ ուսուցանելից, կամ ուսուցանելի միջոցով այլ լեզուներից:

Փոխառություններից օգտվելու հարցում Չարենցը, թեպետ ոչ միշտ, ունեցել է որոշակի մոտեցում. օգտագործել այն բառերը, որոնք հայերենում չկան և որոնք կարող են հարստացնել հայոց լեզվի բառապաշարը:

Ինչպես երևում է բերված օրինակներից, Չարենցի օգտագործած բառերի մեծ մասը, չնչին բացառություններով, ձուլվել է մեր լեզվի բառային կազմին և հարստացրել մեր լեզուն: Չարենցն ինքն սկզբունքորեն ղեմ էր լեզվի մեջ անհարկի փոխառությունների, օտար բառեր գործածելուն, որոնք բացի լեզուն գոհեցնելուց ոչ մի նախապատվություն չեն ստեղծում լեզվի համար: Այս առումով բնորոշ է Գ. Արզվի «Դանակը բկին» բանաստեղծությունների ժողո-

վածուի առթիվ գրված Չարենցի մի գրախոսականը: Այդ գրախոսականում, քննադատելով Աբովին ոչ տեղին փոխառություններ գործածելու համար, Չարենցը գրում է. «Ինչո՞ւ վեղրո և ոչ թև դույլ, երբ այդ դույլը կա: Հասկանում ենք՝ «պրոպելլեր»,—հայերենում պրոպելլեր չկա: Ոչ միայն բառը, այլև ինքը չկա»⁸:

Արտահայտելով այն ճիշտ միտքը, թե պետք է այդ նոր, հերոսական ժամանակը արտահայտել լեզվական բարձր կուլտուրայով, Չարենցը գտնում էր, որ չպետք է տարվել նորարարության մարմաջով, կտրվել իրականությունից. օտար և անհարկի բառեր գործածելով հնարավոր չէ արտացոլել նոր իրականությունը և բարձրացնել գրական լեզվի մակարդակը: Նոր ժամանակն արտահայտելու համար անհրաժեշտ են լեզվական նոր միջոցներ, հարուստ բառապաշար, այլապես «Պոռչադը» չի օգնի և ոչ էլ կօգնի «վեղրոն»: Հնդ-հակառակը՝ հենց այդ բառերն են, որ ամենից ատաճ հավասարեցնում են զոր-ծածաղի լեզուն՝ «Բուլի» մակարդակին (ընդգծումն իմն է—Ա. Մ.), իսկ սա Տերյանից և նրա «հաջորդներից» հետո ցած մակարդակ է⁹: Նկնելով այս ճիշտ սկզբունքից՝ Չարենցն իր ստեղծագործություններում գործածում է հիմնականում այնպիսի փոխառություններ, որոնք թելադրվում են հայ գրական լեզուն հարստացնելու և զարգացնելու պահանջով: Չարենցի լեզվական կուլտուրան այս առումով արտացոլում է մեր գրական լեզվի զարգացման 20—30-ական թվականների մակարդակը և այդ զարգացման առողջ տենդենցները:

Ասվածից, իհարկե, չի հետևում, թե Չարենցի ստեղծագործություններում ընդհանրապես անհարկի փոխառություններ չկան: Թեպետ Չարենցը քննադատում է Աբովին «պոռչադ», «վեղրո» բառեր գործածելու համար, բայց հենց իր՝ Չարենցի հատկապես 20-ական թվականների դորժելում էլ հանդիպում ենք այսպես ասած «վեղրոների», անհարկի բարբառային փոխառությունների, ավելի ճիշտ օտարաբանությունների օդադործման փաստերի, ինչպես, օրինակ՝ բոչկա, կանալ, պալտո, ուլս, պլանետ, Լտաժ, շին, մաշինս, զավոդ, շրապնել և այլն, որոնք ամենևին էլ շատան մեր լեզվի մեջ և չէին էլ կարող մտնել, որովհետև հայերենն ուներ իրանց համարժեք բառերը:

Սրանք էլ ոչ այնքան Չարենցի լեզվական ճաշակի, որքան ժամանակաշրջանի արդյունք էին, երբ ղեռ չկար հստակ ու որոշակի պատկերացում փոխառություններից օգտվելու հարցում: Դեռ ավելին, 20-ական թվականների պոեզիայում լեզվական նյութի ընտրության մեջ նկատվում է որոշ նատուրալիզմ, բանաստեղծական լեզվի հասարակացում, նույնիսկ ղոկհացում: Տեխնիկայի ֆետիշացումը, այն ամեն ինչից վեր դասելու կոնստրուկտիվիզմի սխալ թեորիան իրենց արտահայտությունն էին գտնում նաև պոեզիայի մեջ: Այդ սխեմատիզմն արտահայտվում էր այն բանում, որ ձգտում էին կյանքի երևույթներն արտահայտել անհարկի փոխառությունների, օտար տերմինների ու բայերի կուտակումով: Այդ տենդենցն իր արտահայտությունն է գտել ինչպես ժամանակի մի շարք այլ բանաստեղծների (Ա. Վշտունի, Գ. Աբով, Գ. Մահարի, Վ. Ալազան), այնպես էլ Չարենցի 20-ական թվականների որոշ դորժելում («Պոեզիոգուհնա», «Կոմալմանախ», «Թոմանս-անսեր», «Կապկադ»):

Սակայն լեզվական այս պարզունակությունը, որ հատուկ է վերը նշված ստեղծագործություններին առհասարակ, բնավ էլ չի դառնում Չարենցի հու-

⁸ «Նորք», 1923, № 2, էջ 210:

⁹ Նույն տեղում:

մար բնորոշ երևույթ և ավելի շատ զրական-պատմական հետաքրքրություն է ներկայացնում: Այդ մի քանի գործերի լեզվական նատուրալիզմն ու պարզունակությունը բոլորովին էլ չեն բնորոշում բանաստեղծի ստեղծագործական դեմքը և մնում են սոսկ որպես պատմական որոշ շրջանի՝ «արագ հոլովվող օրերի» արտահայտություն:

Փոխառյալ բառերից պետք է տարբերել այն բառերը, որոնք զեղարվեստական հատուկ նպատակներով գործածվում են գրողների ստեղծագործություններում, բայց չեն մերվում մեր լեզվի բառային կազմին և ինչպես իրենց արտաքին ձևով, այնպես էլ գործածության բնույթով դիտվում են որպես օտարաբանություններ: Եթե փոխառությունները դիտվում են որպես լեզվի բառային կազմի հարստացման օրինական ուղիներից մեկը, ապա օտար բառերի ավելորդ գործածությունները, ընդհակառակն, աղավաղում են մայրենի լեզուն: Փոխառյալ բառերի մեծ մասը, երկար ժամանակ գործածվելով լեզվի մեջ, ժամանակի ընթացքում չի էլ դիտվում որպես այդպիսին, և նրանց փոխառյալ լինելը երևան է բերվում միայն լեզվական-պատմական հատուկ քննությամբ: Հետևաբար, երբեք չի կարելի նույնացնել փոխառյալ բառերը օտար բառերի հետ: Օտար բառերի թիվը Չարենցի պոեզիայում հասնում է մոտ 200-ի: Այդ բառերը վերցված են տարբեր լեզուներից (ռուսերենի միջոցով) և գործածված են տարբեր նպատակներով՝ կատարելով զեղարվեստական որոշակի դեր:

Արաբերեն և թուրքերեն բառեր.— աղալաք, ալլահ, աղալաբ, աղլիուր, արխաղաշ, միլլաթ, րազի, բելուկ, դու, դուֆան, իթ, կարդաշ, յաշասն, յոկ, յոխտուր, դուֆանդաբ, յոլդաշլաբ և այլն: Ֆրանսերեն բառեր.— ալեյա, գալանտ, դևիզ, կրետին, էտաժ, մանժետ, տերրաս և այլն: Գերմաներեն բառեր.— աղվա-կատ, այն, աուֆ-վիդերզեհեն, գուր, ֆրեյլին, կափուտ, սալդատ: Անգլերեն բառեր.— դենդի, միսուր, սմոկինգ, շրապնել: Ռուսերեն բառեր.— զավոդ, դրաս-տի, մոմիկ, պոլկ, պարավոզ, սուեպ, տավարիշչի: Վրացերեն բառեր.— արա-իս, էրքի, գաումարջոս, ֆեր, ամխանազերո և այլն:

ՆՈՐԱՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Չարենցի լեզվի բառապաշարում առանձնահատուկ տեղ են զբաղում նորաբանությունները¹⁰: Ամեն մի գրող ոչ միայն օգտվում է մայրենի լեզվի ընդհանուր դանձարանից, այլև ինքն էլ իր հերթին նպաստում է նրա հարստացմանը՝ կազմելով բազմաթիվ նոր բառեր: Չարենցի բառապաշարը արտա-ցույցում է հայ գրական լեզվի 30-ական թվականների զարգացման ընդհանուր պատկերը: Նրա բառապաշարում հանդիպում ենք հենց այդ շրջանում մեր լեզվի մեջ մտնող բազմաթիվ նորաբանությունների, որոնց զգալի մասը հենց իր՝ բանաստեղծի կազմություններն են: Չարենցը մեր լեզուն հարստացրել է բազմաթիվ նորակերտ բառերով, որոնք աչքի են ընկնում կազմության ճշտու-թյամբ, իմաստային ու արտահայտչական նրբությունների բազմազանությամբ: Չարենցի բառապաշարում հանդիպում ենք և՛ բառաբարդացման, և՛ բառա-ծանցման ճանապարհով կազմված բազմաթիվ նոր բառերի. դրանց թիվը հաս-նում է 400-ի: Այստեղ բերում ենք միայն նոր և նորակերտ թվացող բառերից մի քանիսը. ահագնաթև, աշխարհասասան, արեգնածին, արևակամ, արևառատ,

¹⁰ Նորաբանությունները դարձրել ենք առանձին ուսումնասիրության նյութ, ուստի և այստեղ չորսի չենք համարում այդ մասին մանրամասն խոսել:

արյունամած, արյունակամ, արեաաառ, մա՛համահուր, բազմադժվար, շամբ-
ոտաշուր, լուսատես՛, վրեժավախ, ողբանկար, գարանիստ, բազմակեղե՛հ,
գալի՛հարեւ (Չարենցի մոտ՝ դալի՛քնարեւ), հեզանկուն, մռայլախոս, հե՛հարել-
լուսել, շա՛հաբել, շրթուն՛ել, բո՛նգանալ, շեփո՛ւել և այլն:

Այս բառերն արձանագրված չեն բառարաններում և չկան նաև Չարենցին
նախորդող մի շարք նշանավոր բանաստեղծների՝ Մեծարենցի, Դուրյանի, Տեր-
լանի, Քումանյանի, Իսահակյանի, Կուրդինյանի, Սիամանթոյի գործերում,
որոնց բառապաշարը մանրամասն ստուգել ենք՝ Չարենցի նորարանություն-
ները համեմատելով նրանց քարտադրած երկերի բառացանկերի հետ¹¹:

Նորարանությունների տեսակարար կշիռը, նրանց կենսունակության ցու-
ցանիշը որոշվում է դրական լեզվի բառապաշարը հարստացնելու և զարգաց-
նելու պահանջով: Եթե տվյալ հեղինակի նորակերտ բառերը դուրս են գալիս
նրա ստեղծագործության շրջանակներից, մտնում դրական լեզվի բառապա-
շարի մեջ, ապա դրանով իսկ մեծանում է այդ բառերի դերն ու նշանակու-
թյունը:

Չարենցի կազմած բառերից շատերն արդեն մտել են մեր բանաստեղծա-
կան բառապաշարի մեջ: Չարենցի բառապաշարի քննությունը ցույց է տալիս,
որ բանաստեղծը հմտորեն օգտվել է հայ դրական լեզվի տարբեր բառաշըր-
տերից և ինքն էլ իր հերթին կազմել է բազմաթիվ նոր բառեր, որոնք հարս-
տացնում են, ինչպես նրա պոեզիայի, այնպես էլ հայ դրական լեզվի բառային
կադմր:

А. А. Марутян

ЛЕКСИКА ПОЭЗИИ Е. ЧАРЕНЦА

Р е з ю м е

Е. Чаренц один из выдающихся представителей советско-армянской классической поэзии. Его творчество выделяется своим своеобразным стилем и высокой языковой культурой.

До сих пор язык и стиль его произведений не изучены.

В настоящей статье дан общий анализ словарного состава поэзии Чаренца. Одна из особенностей стиля Чаренца — особое отношение к слову. Он не удовлетворился использованием только слов армянского литературного языка. Чаренц наш язык обогатил многими неологизмами, которые обогащают не только лексику поэзии Чаренца, но и армянский литературный язык.

Поэт использовал разные пласты армянского языка. Основой лексики Чаренца являются общеупотребительные слова армянского языка. Но он использовал также слова, имеющие разные стилистические оттенки (диалектизмы, архаизмы, историзмы, слова из древнего армянского языка, варваризмы, вульгаризмы, просторечные слова и т. д.).

В статье говорится как о необходимости употребления этих слов, так и о их стилистических особенностях. Чаренц умело использовал смысловые оттенки синонимов и общеупотребительных слов армянского языка.

¹¹ Չարենցի նորարանություններն ստուգելիս օգտվել ենք ՀՍՍՌ ԳԽ լեզվի ինստիտուտի, կազմած բարոարանից, որի համար մեր շնորհակալությունն ենք հայտնում: